Հավելված N 438
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հանրային ներդրումների վարչության (այսուհետ՝ Վարչություն) կանաչ տնտեսության բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 23-32.13-Մ4-6)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) մասնակցում է կանաչ ու կայուն տնտեսական զարգացման քաղաքականության, կանաչ տնտեսության զարգացմանը նպաստող համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշակման աշխատանքներին.

2) մասնակցում է արևային էներգետիկայի տեխնոլոգիական զարգացմանը նպաստող իրավական ակտերի մշակման աշխատանքներին .

3) մասնակցում է էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի և իրականացման անհրաժեշտ միջոցառումների մշակման աշխատանքներին.

4) մասնակցում է բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման հնարավորությունների՝ դրանից բխող քաղաքականության և իրավական ակտերի ուսումնասիրման և մշակման աշխատանքներին.

5) մասնակցում է տնտեսավարող սուբյեկտներին կանաչ տնտեսությանն անցման գործընթացի նպաստման աշխատանքներին.

6)իրականացնում է կանաչ և կայուն տնտեսական զարգացմանը միտված իրազեկման և ուսուցողական աշխատանքներին.

7) մասնակցում է կանաչ տնտեսությանն առնչվող ոլորտային ռազմավարությունների ուսումնասիրության իրականացման աշխատանքներին.

8) մասնակցում է կանաչ ներդրումների, ինչպես նաև կանաչ բաղադրիչով նորարարական լուծումներով արտադրության կազմակերպումը խթանող քաղաքականության և բարենպաստ օրենսդրական դաշտի մշակման աշխատանքներին:

Իրավունքները՝

• Ստանալ կանաչ ու կայուն տնտեսական զարգացման քաղաքականության, կանաչ տնտեսության, ինչպես նաև արևային էներգետիկայի տեխնոլոգիական զարգացմանը նպաստող համապատասխան նորմատիվ իրավական ակտերի մշակման վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը

• մասնակցել այլ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ կանաչ տնտեսության ուղղություններին առնչվող, ինչպես նաև արևային էներգետիկայի տեխնոլոգիական զարգացմանը նպաստող իրավական ակտերի մշակման վերաբերյալ կազմակերպվող մասնագիտական քննարկումներին"

• էլեկտրամոբիլների և էլեկտրական շարժիչներով աշխատող տրանսպորտային միջոցների և հարակից ենթակառուցվածքների ներդրման ծրագրի մշակման և իրականացման վերաբերյալ ստանալ համապատասխան տեղեկություններ.

• կատարել հարցումներ բնական ռեսուրսների տնտեսական ցիկլում առավել երկար պահպանման հնարավորությունների ուսումնասիրման նպատակով իրավական ակտերի մշակման անհրաժեշտության վերաբերյալ.

• մասնակցել միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակում կանաչ տնտեսության ուղղություններին առնչվող մասնագիտական քննարկումների նախապատրաստման աշխատանքներին:

Պարտականությունները՝

• ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ համապատասխան մարմինների կողմից ներկայացված՝ կանաչ տնտեսության ուղղությունների վերաբերյալ.

• կատարել կանաչ տնտեսության ուղղությունների վերաբերյալ մասնագիտական դիտարկումներ և ներկայացնել առաջարկություններ.

• տրամադրել տեղեկատվություն կանաչ տնտեսության անցման, կանաչ ներդրումների, ինչպես նաև կանաչ բաղադրիչով նորարարական լուծումներով արտադրության կազմակերպման վերաբերյալ.

• ուսումնասիրել միջազգային փորձը կանաչ ու կայուն տնտեսական զարգացման վերաբերյալ և ներկայացնել առաջարկություններ.

• մշակել կանաչ և կայուն տնտեսական զարգացմանը միտված իրազեկման և ուսուցողական աշխատանքները կազմակերպելու հետ կապված փաստաթղթերը և կազմել հաշվետվություններ.

• նախապատրաստել համապատասխան մարմինների կողմից ներկայացված կանաչ տնտեսության ուղղությունների վերաբերյալ պահանջվող փաստաթղթերը:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն

4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: